«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն ՝ *Ք.* Երևան, համար 94 մանկապարտեզ

Դաստիարակ ՝ Հեղինե Բաղալյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……3
ԳԼՈՒԽ 1. Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում….6
1.1 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին ……10
1.2 Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ……14
1.3 Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ……16
ԳԼՈՒԽ 2. Գործնական աշխատանք……20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……21
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր
յուրահատուկ ունակությունները:
Չկա առավել անմիտ բան, քան նրա այդ ունակությունը
մեր փորձով փոխարինելու փորձը...
/Ժան Ժակ Ռուսո/

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխպայմանավորված են, և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ուղեկցում է նրան ողջ կյանքում: Կյանքի սկզբնական շրջանում երեխան զարգանում է, ընկալում աշխարհն ու արձագանքում արտաքին միջավայրին իրեն շրջապատող մեծահասակների ուղղակի միջնորդությամբ: Մանկավարժության ակունքները պետք է փնտրել ժողովրդական մանկավարժության մեջ, քանի որ ժողովրդական մանկավարժությունն իր մեջ ներառում է ազգի հավաքական պատկերացումներ իսկական մարդու մասին: ժողովրդական մանկավարժությունն իրենից ներկայացնում է դարերի ընթացքում ձևավորված և զտված, ազգային ավանդույթների և սովորությունների վրա հենված, ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններով հագեցած մանկավարժական անկրկնելի փորձ, որի դաստիարակչական ներուժն անփոխարինելի է:
Մանկավարժությունը գիտություն է անձի ձևավորման ու զարգացման օրինաչափություն-ների, կրթության, ուսուցման և դաստիարակության ձևերի, մեթոդների ու բովանդակության մասին: Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության, զարգացման հիմնախնդիրներով:
Յուրաքնչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման, անհատականության ձևավորման ողջ կյանքում անժխտելի է:Նախադպրոցական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան

դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով սաների ծնողների ու ընտանիքների հետ։

Ասվածից հետևում է, որ հետազոտական աշխատանքի թեման ոչ միայն կարևոր է, այլ նաև **արդիական է** բոլոր ժամանակներում։

Մեր աշխատանքի բուն **նպատակն է** հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ - ընտանիք կապի առանձնահատկությունները, արդյունավետությունը և առավելությունները երեխայի դաստիարակության հարցում։

Նպատակն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները՝** ուսումնասիրել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության մոդելները, ուսումնասիրել ընտանիքի ներգրավվածությունը մանկապարտեզի ընդհանուր գործունեությանը։

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն է կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում նախադպրոցականի ճիշտ զարգացումը։ Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում։ Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին։Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառի իրազեկությունից և երեխայի դաստիրակության գործին նրանց ներդրումից։ Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման։Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին։ Այս տեղեկությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին։ Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է։Անշուշտ, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում։ Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ։ Անհրաժեշ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության։

Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքը սահմանում է նախադպրոցական կրթության նպատակը, ըստ որի այն

1. Նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգեկան, ֆիզիկական կարողությունների համակողմանի զարգացանը, դաստիարակությանը, խնամքին, առողջության պահպանմանը և սոցիալական ներառմանը,տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը, սոցիալական, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

2. Երեխայի իրավունքների պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքին:

3. Երեխայի անհատականության ձևավորմանը և տարրական կրթությունն արդյունավետ նախապատրաստմանն ու սահուն անցմանը:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից՝ տեսական և գործնական, եզրակացությունից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում.

«Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում,
այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը»
Բենջամին Սփոք.

Նախադպրոցական տարիքի սաների սոցիալական զարգացման գործընթացը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Հետևաբար արդյունավետ համագործակցությունը անհրաժեշտ պայման է: Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակչական հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:
Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերվող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է իմի բերել երկու սոցիալական ինստիտուտների (ընտանիքի և նախադպրոցական հաստատության) ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում.օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը:

Երեխան ծնվելով ընկնում է բոլորովին նոր միջավայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Ընտանիքում են դրվում երեխայի

բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը: Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Յուրանքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է և ծնողներն են պատասխանատու նրա հետագա ողջ կյանքի համար: Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարություն, ուշադրություն, քնքշանք, թույլերի նկատմամբ օգնության ձեռք մեկնելն ու օգնելու հիմքերը: Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրաստվում է հետագա աշխատանքային գործունեությանը:

Տ.Ա.Մարկովան երկար տարիներ ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելությունները, առանձնացնում է ընտանեկան դաստիարակության երեք այն գործոնները, որոնք բնութագրում են ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները:

Առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին: Այն չափազանց հուզական է, ընկերական և մտերմիկ: Ընտանեկան դաստիարակությունն ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ, փոխադարձ քնքշությամբ և հավատարմությամբ: Ընտանիքում առկա են անտեսանելի, ներքին հուզական կապեր, որոնք ապահովում են երեխայի անվտանգ և պաշտպանված կյանքը, ինչը երեխայի մեջ վստահություն է առաջացնում իր և աշխարհի հանդեպ: Ընտանեկան ջերմությունը երջանիկ մանկության ուղեկիցն է, ապագա ներդաշնակ կյանքի կառուցման երաշխիքը:

Ընտանեկան դաստիարակության երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական (տևական) բնույթն է: Ընտանիքում ստեղծվում են լավագույն պայմաններ երեխային հանգիստ, առանց շտապելու դաստիարակելու համար: Այն ինչ հնարավոր չէր երեկ, կարելի է իրականացնել այսօր կամ վաղը: Երկարատև ներգործելու հնարավորությունը ծնողներին օգնում է փորձարկել և ընտրել դաստիարակության տարբեր եղանակներ, շտկել թույլ տված սխալները, վերանայել և վերակառուցել ընտանիքում սովորական դարձած, հաճախ կարծրացած փոխհարաբերությունները: Երեխային ընտանիքում դաստիարակում են միշտ նույն մեծահասակները, որոնց դաստիարակող գործողությունները կանխատեսելի են և հաշվարկելի: Նույնիսկ այն դեպքում, երբ ծնողների դաստիարակող ներգործությունը ընդունելի չէ երեխայի կողմից, այն անսպասելի չէ, հետևաբար ելք ենթադրող: Օրինակ, կարելի է կանխատեսել մայրիկի կամ հայրիկի

զայրույթը և ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ներողություն խնդրել, ինքնակամ անկյուն կանգնել: Ընտանեկան դաստիարակության կայուն և մշտական բնույթը ներգործում է ինքնադաստիարակության սկզբունքով: Արդյունքում, երեխան սովորում է համարժեք արձագանքել արտաքին իրողությանը: Ընտանեկան դաստիարակության հուզական և կայուն բնույթը նպաստում է երեխայի նյարդային համակարգի հավասարակշռությանը, հոգեկան ներդաշնակությանը և հանգիստ ու ապահով կենսակերպի հաստատմանը:
Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծմանը, լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է: Երեխան, ինչպես և հայրիկը կամ մայրիկը, ընտանիքի լիարժեք անդամ է, հետևաբար ունի իրավունք մասնակցելու ընտանեկան գործունեության քննարկմանն ու լուծմանը: Նշված հնարավորությունը երեխային ոգևորում է և նրա մեջ ցանկություն առաջացնում հավասարաչափ մասնակցելու ընտանիքի բոլոր գործերին: Երեխան հաճույքով և ամենայն պատասխանատվությամբ է կատարում իրեն վստահված բոլոր հանձնարարությունները, որոնք աստիճանաբար կարող են վերածվել պարտականությունների: Վաղ տարիքից սկսած երեխան ընտանիքում կարող է ունենալ մշտական պարտականություններ՝ հավաքել խաղալիքները, կատարել տատիկի կամ պապիկի խնդրանքը, իսկ երեք տարեկանից նա լիովին ընդունակ է օգնելու կենցաղային տարբեր գործերում՝ խնամել ծաղիկները, ջրել հողամասի ծառերը, կերակրել շնիկին և այլն: Այսպիսով, ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնակազմակերպումը, ինքնասպասարկումը,պատասխանատվությունը, հոգատարությունը: Ընտանիքի անդամները պետք է.

1. Ժամանակ հատկացնեն իրենց երեխային: Նկատեն հիվանդությունը, հուզական ապրումները, քաշի ավելացումը կամ կորուստը, խնամքի պակասը:

2. Ավելի շատ ժամանակ անցկացնեն՝ լսելով երեխաներին: Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են զգում իրենց մանկապարտեզում:
3.Կատակեն և զվարճանան միասին:

4. Աշխատեն աշխարհին նայել երեխայի աչքերով:

5. Երբեմն նաև հրաժարվել արտաժամյա աշխատանքից և այդ ժամանակը նվիրել երեխային:

6. Օրը ճիշտ սկսել, չմոռանալ հրաժեշտ տալ:

7. Համբուրել երեխային, գրկել և ասել, որ շատ են սիրում նրան:

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է: Մանկապարտեզը պետք է ստեղծի միջավայր երեխայի ճիշտ զարգացման գործում, իսկ դաստիարակը ստանձնի խաղընկերոջ դերը: Երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի, որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Նրա էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ: Նրա հին խաղալիքները փոխարինվում են նորերով: Փոքրիկը զբոսնում է, խաղում, սնվում օրվա հստակ ժամերին: Երեխան ստանում է իր առաջին հանձնարարությունները և նրա մոտ զարգանում է պատասխանատվություն և ինքնուրույնությունԸնտանիքի և մանկապարտեզի հաղորդակցումը նպաստում է նրանց փոխըմբռնման ու կողմնորոշմանը:
Մանկապարտեզ հաճախելիս զարգանում են երեխայի սոցիալական հմտությունները՝ հարգել դիմացինին, ծանոթանալ նոր մոտեցումների և գաղափարների հետ, ընդլայնել աշխարհայացքը:
Մանկապարտեզը հսկում է երեխայի հստակ սահմանված օրվա ռեժիմը:Երեխայի հետ աշխատում է մասնագիտացված աշխատակազմ:Մանկապարտեզը օգնում է երեխային հեշտ անցնել դեպի դպրոց ճանապարհը և արագ հարմարվել դպրոցին: : Մանկավարժները էլ պետք է իրենց հերթին նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը դառնա բաց համակարգ: Ընտանիքի և մանկապարտեզի հաղորդակցումը նպաստում է նրանց փոխըմբռնման ու կողմնորոշմանը:
Հինգ կարևոր պատվիրան, որին պետք է հետևեն և՛ ծնողները և՛ մանկավարժները.
Նախ՝ երեխային սիրել, հետո՝ դաստիարակել ու ուսուցանել:
Երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին ինքը կա:
Ընդունել երեխայի սխալվելու իրավունքը:
Օգնել երեխային՝ գործել ինքնուրույն:
Ճանաչել նրա անձը և օգնել կատարելագործել:

1.1 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

Ժամանակակից մանկապարտեզներն արդյունավետ աշխատանքի համար կարևորում են ընտանիքի հետ համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման:Այս համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛մանկապարտեզը: Վաղ մանկության շրջանում երեխաներին իրենց ինքնուրույնությունը, անհատականությունը հաստատելու, ապահովության խնամք և բարեկեցություն ունենալու համար կախված են լինում իրենց ընտանիքներից: Ծնողները համարվում են երեխայի առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը:Այն մարդիկ ովքեր անմիջապես շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին, փոքրիկի հետ աշխատող մանկավարժը պարտավոր է ուսումնասիրել նրանց ընտանիքը: Ընտանիքները տարբեր են իրենց կազմով և գործունեությամբ: Մանկավարժը պետք է տեղեկություններ տա ծնողին երեխայի մասին, որոնք կօգնեն երեխայի հետ հետագա շփմանը, ինչպես նաև առողջական խնդիրների, սննդակարգի մասին: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը:Ինչու՞ է անհրաժեշտ խթանել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը: Երբ ընտանիքի անդամները դրական մասնակցություն են ունենում մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մանկությունը կարճատև է և ոչ պարբերական, երեխայի ինքնագնահատականը մեծանում է : Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Մանկապարտեզի կյանքին ընտանիքների մասնակցությունը ավելի է ոգեշնչում երեխաներին: Ընտանիք – մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանը ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Երեխան ամեն ինչ առաջինը սովորում է և փորձում է հենց ընտանիքում, սկսած կերակրելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, կրթում և դաստիարակում: Երեխան իր վրա կրում է ընտանիքի ազդեցությունը և դաստիարակությունը: Որոշ դեպքերում առկա է լինում դաստիարակ-ծնող փոխհարաբերության աններդաշնակություն, որը ծնողին հետ է

պահում երեխայի ուսուցման գործին ակտիվ մասնակցությունից:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու մանկապարտեզը: Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանիքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ՝ կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում, սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն: Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Ի՞նչ է շահում ընտանիքը: Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխաների հաջողությունների ու դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի դաստիարակումը տանը:. Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:. Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն, և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ:Ծնողը ոչ միայն պատվիրատու է, գործընկեր, այլև իր երեխային վերաբերող նյութի յուրացնողը, իրագործողն ու տարածողը: Պետք է ժողովներ ու հանդիպումներ անցկացնել ծնողներին հարմար ժամերին, օրերին: Թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը: Պահպանել սերտ կապ, զրուցել ընտանիքի անդամների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ: Հենվել ընտանիքի և երեխայի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն, լինել համբերատար, պահպանել գաղտնիություն: Ընտանիքին մանկապարտեզի գործունեությանը մասնակից դարձնելու համար կարելի է կիրառել բազում մեթոդներ, որոնք կօգնեն երեխային ինքնուրույն հասնելու հաջողության:

Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություն են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:

Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգություններին առնչվող հարցեր:

Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը դաստիարակության փորձի փոխանակումն է:

Առավոտյան հանդիպումներ. ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստիարակը ներկայացնում է այն գործողությունները, որոնք կատարվել են երեխայի հետ աշխատելիս:

Կլոր սեղան, զրույցներ՝ անհատական և խմբային

Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային

Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ

Սպորտային միջոցառումներ

Այցելություններ ընտանիքներ. տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և կարևոր տեղեկություն են տալիս երեխայի մասին: Այցի մասին պետք է նախապես տեղեկացնել:Այստեղ է, որ դաստիարակը նկատում է, թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մեթոդները: Այցը թույլ է տալիս մանկավարժին իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է երեխան: Կարևոր է, թե այցի նպատակը ծնողի հետ հաղորդակցու՞մն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Պետք չէ ակնկալել, որ տնային այցերը կկարողարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:Դաստիարակը պետք է ունենա լավ տրամադրություն, մոռանա բորոքների մասին, թույլ չտալ դիտողություններ ու քննադատություններ, խորհուրդներ տալ զգուշավորությամբ: Բանավոր խոսքը նույնպես մեծ դեր ունի երեխայի համակողմանի զարգացման մեջ: Մանկավարժը երեխայի հետ շփվելիս պետք է խոսի հստակ և հատ-հատ: Արագախոսությունը երեխայի մոտ հետագայում առաջացնում է թոթովախոսություն: Համացանցը այսօր մեծ հնարավորություններ է տալիս ծնողին ներկա և հաղորդակից դարձնել երեխայի մանկապարտեզի առօրյային: Մենք ևս ստեղծել ենք սոցիալական հարթակում խումբ, որտեղ ներկայացնում եմ ամենօրյա աշխատանքից կադրեր և իհարկե

մեկնաբանություններ կատարված աշխատանքի մասին, չէ որ բոլոր ծնողներն են մոտ կանգնած մանկավարժությանը կամ մանկավարժներ են: Նպատակը մեկն է, որ նրանք հետևեն մեր աշխատանքին և հասկանան ինչ աշխատանք է արվում և ինչի համար: Նաև ծնողները հաճախ այս խմբում հանդես են գալիս առաջարկություններով, մեկնաբանություններով, ինչու ոչ նաև դժգոհություններով:

Ծնողի հետ համագործակցության առաջին քայլը երեխային մանկապարտեզին ադապտացնելն է: Ահա մի քանի խորհուրդ այդ համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու համար.

Անհրաժեշտ է նախապատրաստել երեխային և սկզբնական շրջանում այցելել մանկապարտեզ երեխայի հետ միասին:

Անհրաժեշտ է նախօրոք երեխային պատմել մանկապարտեզի մասին, որ այնտեղ շատ երեխաներ կան, հետաքրքիր խաղեր են խաղում: Երեխային մանկապարտեզին ադապտացնելու համար անհրաժեշտ է միջինը մեկից երկու շաբաթ: Երբ երեխան առաջին իսկ օրվանից հանգիստ հաճախում է պարտեզ, ապա ծնողը որևէ հոգս չունի դրա հետ: Հակառակ դեպքում պետք է համագործակցել մանկավարժների հետ և երեխայի հետ որոշ ժամանակ մնալ այնտեղ: Թողնել երեխային խաղա, ապա տանել տուն: Ամեն օր պարտեզում մնալու ժամանակը ավելացնել: Կարող եք երեխային սպասել մեկ այլ սենյակում, ոչ մի դեպքում առանց երեխային հրաժեշտ տալու չհեռանալ: Այս գործնթացը տևում է մեկից երկու շաբաթ: Ծնողը պետք է լինի հետևողական, վստահի մանկավարժին և ամեն ինչ կընկնի հունի մեջ: Այս եղանակով պատրաստվում են ոչ միայն մանկապարտեզին, այլ նաև դպրոցին և կյանքին՝ որպես հասուն մարդիկ:

1.2 Ծնողական ժողովներ, առաջարկությունների արկղիկ

Ծնողական ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ անրադառնալ սովորական աշխատանքային ժամերին: Ժողովներ վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը մանկավարժի «տարածքն է»: Շփման ընթացքում օգտագործել է ոչ նեղ մասնագիտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հստակ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխաներին: Ծնողների գնալուց հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր և խմբային:

Ընդհանուր ժողովները կազմակերպվում են տարին երկու-երեք անգամ: Դրանք իրականացվում են հիմնականում մանկավարժական խորհրդի և տնօրենի գլխավորությամբ: Քննարկվում են խնդիրներ կապված նոր ուսումնական տարվա և աշխատանքների ամփոփման հետ կապված: Այս դեպքում մանկավարժը պետք է զրուցի ոչ միայն երեխաների այլև առօրյա հոգսերի, մանկապարտեզի մշակութային կյանքի և այլ իրադարձությունների շուրջ: Ընդհանուր ժողովներին կարելի է հրավիրել բժշկի, հոգեբանի, արվեստագետի, մանկագրի այլ մասնագետների, կարելի է ծնողների խմբից ընտրել մասնագետներ, ովքեր կկարողանան պատասխանել հարցերին:

Խմբային ժողովները անցկացվում են 2-3 ամիսը մեկ անգամ: Դաստիարակը զեկուցում է խմբի ընդհանուր կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին: Խոսքով կարող են հանդես գալ ծնողներ:

Գոյություն ունեն նաև ծնողական համաժողովներ, որոնց հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակման փորձի փոխանակումը: Ժողովի ժամանակ ելույթ են ունենում տարբեր մասնագետներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ՝ երեխաների կամ մանկավարժների ձեռքի աշխատանքներից:

Համաժողովի վերջում մասնակիցները հրավիրվում են «կլոր սեղանի»շուրջ: Որոշվում են

ապագա մրցույթների, ծրագրերի օրերն ու ժամերը: Որոշ ծնողների խոսքից հետո պետք է դաստիարակը ընդհանրացնի իր ասելիքը՝ համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի իրադարձություններով:

Առաջարկությունների արկղիկը, որը հիմնականում ամրացվում է մանկապարտեզի միջանցքների պատերին, հիմք է հանդիսանում, որ ծնողները արտահայտեն իրենց մտահոգությունները երեխաների հետ կապված այս կամ այն հարցի շուրջ: Ծնողը պարտավոր չէ իր թերթի վրա նշել իր կամ երեխայի անունը: Արկղը բացվում է ժողովների ժամանակ և քննարկվում դրա մեջ հավաքված հարցերը: Կարելի է անցկացնել մրցույթ «Ամենահամերաշխ ընտանիք» վերնագրով, որտեղ ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու երեխաները: Այս մրցույթներն ավելի են մտերմացնում թե ընտանիքի անդամներին, թե ընտանիք- մանկապարտեզ հարաբերությունները: Վերջում տրվում են պատվոգրեր: Երեխաները կոփվում են հոգեպես և ֆիզիկապես ավելի մտերմանում ընկերների հետ: Այս բոլոր միջոցառումները կատարելագործում են մանկապարտեզները և ճիշտ օրինակ դարձնում նոր ստեղծվող մանկապարտեզների համար: Դրանք պետք է շարունակական լինեն, որպեսզի արդյունավետ ազդեցություն գործեն երեխայի զարգացման վրա:

1.3. Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Մանկապարտեզի կապը ծնողի հետ պետք է փոխադարձ վստահության վրա հիմնված լինի, դրա համար ծնողների հետ աշխատանք տանելու ժամանակ անհրաժեշտ է ստեղծագործական և ճկուն մոտեցում, իսկ այդ կապի ամրապնդման համար առաջարկում ենք հետևյալ խորհուրդները.

1.Ծնողներին պարապմունքների ու կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար պետք է օգտագործել բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերել:

2. Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողների համար հարմար ժամերի:

3..Թույլ տալ, որ ընտանիքը ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:

4.Պահպանել սերտ կապ՝ հետևելով, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի շաբաթը մեկ անգամ:

5. Փորձել ներգրավել ամբողջ ընտանիքին: Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից:Ստեղծագործաբար պետք է նրանց ներգրավել:

6. Հենվել երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն:

7. Լինել համբերատար և պահպանել գաղտնիությունը:

Կան նաև ոչ պաշտոնական գրառումներ, որը մանկավարժը երեխայի միջոցով տուն է ուղարկում: Դրանք պարունակում են տեղեկություններ երեխայի մասին: Պարունակում են նաև շնորհակալական խոսքեր մանկապարտեզի աշխատանքին այս կամ այն կերպ մասնակցելու համար:

Պատի տեղեկատվական թերթերը օգնում են ընտանիքին միշտ նոր տեղեկություն հաղորդելու համար: Դրանց միջոցով ազդարարվում են ժողովները, ամենօրյա դասացուցակը, ուսումնական հաստատության անցուդարձը:

Խորհուրդներ ծնողներին աշխարհի ականավոր մարդկանցից.

-Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքներին: **Օնորե դը Բալզակ**

- Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան,փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով:

Ժան Ժակ Ռուսո

-Երեխաներին դաստիարակեք՝ նրանց համար հրաշալի օրինակ լինելով:Երեխաները չեն սիրում հրահանգներ ու թեզեր:Նրանք ուզում են տեսնել Ձեր արարքները, և ոչ թե լսել Ձեր խոսքերը:

-Երեխաները պետք է անսահման վստահեն իրենց ծնողներին: Դա երեխային համերաշխ ու սիրող ընտանիքում մեծացնելու հիմնական պայմանն է: **Մայր Թերեզա**

Հինգ կարևոր պատվիրան, որին պետք է հետևեն և՛ ծնողները և՛ մանկավարժները.

Նախ՝ երեխային սիրել, հետո՝ դաստիարակել ու ուսուցանել:

Երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին ինքը կա:

Ընդունել երեխայի սխալվելու իրավունքը:

Օգնել երեխային՝ գործել ինքնուրույն:

Ճանաչել նրա անձը և օգնել կատարելագործել:

Ընտանեկան դաստիարակության մեջ խաղը կարևորագույն դեր է իրականացնում: Երեխան ինչպես ներգրավում է խաղի մեջ, այնպես էլ հետագա կյանքում աշխատանքի մեջ:

Փոքր տարիքում հիմնականում երեխան խաղում է շատ պարզ ձևով: Լավ կազմակերպված ընտանիքը ժամանակի ընթացքում երեխային վստահում է ավելի բարդ աշխատանք, որը կարևոր է ամբողջ կյանքի համար: Հարկավոր չէ երեխային ավելի շուտ շեղել խաղից և տեղափոխել իրական աշխարհ:Երեխայի համար դա սթրես է: Երեխայի խաղը ղեկավարելիս ծնողը պետք է լավ մտածի, թե ինչ է դա և ինչով է տարբերվում աշխատանքից: Խաղի և աշխատանքի միջև շատ տարբերություն չկա, քանի որ լավ խաղը նման է լավ գործի, վատը՝ վատ գործի: Խաղը պասիվ է, երբ երեխան կրկնօրինակում է ուրիշի գործերը, ակտիվ՝ երբ փորձում է ավելի զարգացնել: Խաղը երեխային սովորեցնում է այն ֆիզիկական և մտավոր ջանքերը որոնք անհրաժեշտ են

աշխատանքի համար: Կան ծնողներ, որոնք մեծ ուշադրություն են դարձնում երեխայի խաղին: Եթե չափը անցնում են միջամտում են: Պետք է նրան ազատություն տալ, որ նա իրական կյանքում էլ որևէ մեկից կախում չունենա: Միայն խաղի ժամանակ զարգանում են երեխայի երևակայությունը, կառուցողական հմտությունները, նյութական կազմակերպման հմտությունները: Հետզհետե խաղի մասշտաբը պետք է ընդլայնել և երեխայի ընկերական շրջապատը նույնպես: Ժամանակի ընթացքում երեխան խաղում է ոչ միայն ծնողի հսկողության տակ, այլև նոր ընկերների հետ՝ նոր շրջապատում: Այստեղ նա հանդես է գալիս որպես թիմի անդամ, որը ոչ միայն խաղային է, այլև կրթական:

Յուրաքանչյուր ծնող պետք է լավ գիտակցի, թե ինչ է դաստիարակում իր երեխայի մեջ: Գիտակցի նաև, որ աշխատանքում աճում է ապագա քաղաքացի, հասարակական էակ: Ծնողն իր աշխատանքով պետք է օրինակ ծառայի երեխային: Երեխան ծնողին նայելիս պետք է տեսնի նրա աշխատասիրությունը, այլ ոչ թե հագուկապը: Մենք դաստիարակում ենք երեխային յուրաքանչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ ուղղակի նայում ենք նրան: Երեխայի դաստիարակումը ավելի դյուրին է քան վերադաստիարակումը: Պահանջվում է շատ ներուժ և համբերություն վերականգնման համար: Այս ամենը շատ ժամանակը հյուծում է ծնողին և փչացնում ծնող- երեխա կապը:Ծնողները ավելի մեծ ջանք ու եռանդ է պետք գործադրեն դժվար դաստիրակվող երեխաներին կարգի բերելու համար:

Ծնողությունը մեր կյանքի ամենակարևոր ոլորտն է: Մեր երեխաները մեր երկրի ապագա քաղաքացիներն են և աշխարհի քաղաքացիներ: Մեր երեխաները ապագա հայրեր ու մայրեր են: Նրանք նույնպես կլինեն իրենց երեխաների դաստիրակները: Երխաները պետք է մեծանան՝ որպես հիանալի քաղաքացիներ, լավ հայրեր և մայրեր, բայց սա բոլորը չէ. մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակումը մեր երջանիկ ծերությունն է ,աղքատ դաստիրակումը մեր ապագա վիշտն է : Սրանք մեր արցունքներն են, սա մեր մեղքն է այլ մարդկանց ամբողջ երկրի առջև:

Անտոն Սեմյոնովիչ Մակարենկո:

Մանկապարտեզը պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը: Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն դաստիարակ կամ ուսուցիչ: Երկուստեք

պետք է հասնել այն գիտակցությանը, որ ամուր կապ ունենալու համար պետք է ընտանիքում և մանկապարտեզում լինի փոխադարձ սեր, հարգանք, ջերմություն, համատեղ աշխատանք: Ի վերջո ծնողին և դաստիարակին միավորում են ընդհանուր մտահոգություններ և խնդիրներ, որոնց լուծումը էապես պայմանավորված է փոխներգործունեության և համագործակցության բնույթով:

ԳԼՈՒԽ 2. Գործնական աշխատանք

Թեմա՝ «Աշնանային ցուցահանդես»

Մանկապարտեզի գործունեության մեջ ընտանիքի ներգրավումը դարձել է գործընթաց, ինչը ավելի է նպաստում ընտանիք-երեխա- մանկապարտեզ համագործակցության ձևավորմանն ու հաստատմանը ։

Մեր գործնական աշխատանքի նպատակն է ընտանիք- մանկապարտեզ արդյունավետ համագործակցության և փոխադարձ վստահության ամրապնդումը։

Աշնանային ցուցահանդեսի հետ կապված աշխատանքների մեջ եվս մեկ անգամ ներգրավեցինք ծնողներին։ Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն ներշնչեց երեխաներին և նրանք սկսեցին ավելի մեծ ոգևորությամբ մասնակցել նախապատրաստական աշխատանքներին։

Համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվեց շատ ջերմ և մտերմիկ մթնոլորտ։

Այսպիսով, վաղվա առողջ սերնդի կայացման համար չափազանց կարևոր է կրթական բոլոր հաստատությունների գործիմաց համագործակցությունը։ Մանկավարժական ընդհանուր գործընթացի արդյունավետության երաշխիքը համագործակցության համար «բաց» կրթական հաստատություններն են։ Հատկապես կարևորվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավումը մանկավարժական գործընթացին։ Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործընթացին, հանդես գա մանկավարժական գործընթացի սուբյեկտի, մանկավարժի օգնականի և աջակցի դերում, հրաժարվելով պահանջատիրոջ կարգավիճակից։ Ժամանակակից մանկավարժության կողմից առավել քան կարևորվում է «ընտանիք- մանկապարտեզ» սոցիալական ինստիտուտների միջև համագործակցության նոր ձևերի մշակումը, փոխադարձ կապի և պատասխանատվության հաստատումը։ Համագործակցության պայմաններում դրական փոփոխությունների են ենթարկվում «ծնող-երեխա-մանկավարժ» փոխհարաբերությունները, որոնք կրթական գործընթացի խթանման և դրա արդյունավետության հիմնական գործոններից մեկն է։

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության, գործնական աշխատանքի արդյունքում եկանք այն եզրակացության, որ դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունը կրում է ընտանիքը, մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին՝ ստեղծելով առողջ, զարգացող միջավայր, երեխայի ներդաշնակ ձևավորման համար:

Ընտանիք- մանկապարտեզ համագործակցության հաջողությունը մեծապես կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերություններից: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, և հարաբերությունները պետք է լինեն բարեկամական, գործնկերային:

Ընտանիք-մանկապարտեզ փոխադարձ վստահության կապը էլ ավելի ամրապնդելու համար առանձնացրել ենք մի քանի կարևոր կետ.

1. Ընտանիքը պետք է դառնա մանկապարտեզի գործնկերը:

2. Ընտանիքը որպես փորձագետ պետք է օգնի մանկապարտեզին զարգացնել և կատարելագործել ծրագիրը:

3. Ընտանիքը պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները:

4. Մանկապարտեզը ծնողին պետք է դիտարկի, որպես գործնկեր, պատվիրատու, լսի ծնողի անհանգստությունը, կարևորի նրա դիտարկումները, տարբեր մասնագիտություններ ունեցող ծնողներին դիտարկի որպես մասնագետ:

5. Ծնողների կարողությունը դիտարկի, որպես ռեսուրս և օգտագործի ի օգուտ մանկապարտեզի:

6. Ծնողներին պետք է ներգրավել մանկապարտեզի ամենօրյա կյանքին՝ ներառելով նրանց տարբեր աշխատանքներում:

Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, ապա դա ավելի է մտերմացնում մանկապարտեզի և ընտանիքի կապը:

Միջոցառումները տալիս են հետևյալ արդյունքները.

.Ծնողների ոգևորվածություն

.Համախմբվածություն

.Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ

.Ծնողների վստահության բարձրացում

.Երեխաների դրական, արդյունավետ վարքագիծ

Այն մանկապարտեզում, որտեղ ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունը կարևորվում է, երեխաները ավելի ազատ են, ինքնավստահ, հանգիստ և երջանիկ: Դա արտացոլվում է երեխայի դեմքին և արարքների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ. Մանուկյան, Ա. Հովհաննիսյան «Նախադպրոցական կրթահամալիր ծրագիր»
2.Մարության Ա.Ս.,Դալլաքյան Ա.Մ. «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան-2005թ.
3. «Նախաշավիղ» հանդես
4. Մակարենկո Ա.Ս. «Դաստիարակություն ծնողավարության վերաբերյալ», 1940թ
5. Մանկապարտեզի ավագ և միջին խմբի (4-5,5-6տարեկանների) կրթական համալիր ծրագիր։
6. Համացանց
7. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
8. Մուրադյան Ժ. «Խաղային ուսուցումը ընտանիքում», Երևան 1987թ.